

# **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐԶՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ**

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

## **Օ Ր Ե Ն Ք Ը**

### **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐԶՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

**Հոդված 1.** 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետը «պատճառած գույքային վնասի» բառերից հետո լրացնել «, կաշառքի, ապօրինի վարձատրության» բառերով:

**Հոդված 2.** Օրենսգրքի 83-րդ հոդվածի 7-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 3.** Օրենսգրքի 87-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերում «83-րդ հոդվածով սահմանված վաղեմության» բառերը փոխարինել «83-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված» բառերով:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: